

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻԷ ԲՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Ե ՈՂՂԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեազգիբներն եւ չեն գարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Փ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԻԲՇՆԱԹԻ ԵՒ ՇՆԱՐՈՒ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐԵ, ՈՂՁ

Գլխաւորի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՌԱՋԱՆԻ ՉԱՄԱՐ

Տարեկան	Ֆրանկ	18
վեցամսեայ	»	10

ՌՈՒՄԻՅՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՉԱՄԱՐ

Տարեկան	րուբլի	7
վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻԿ Է

ԵՒ ԲՂԹԱՏԱՐԻ ՇԱՒԻՐԸ

Թերթին վարչութեան վրայ է

ՉՈՐԻԲՇՆԱԹԻ 13/26 ԴԵԿՏ. 1900

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 57

ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ)

1852ին վենետիկայ Միսիթարեան վանուց միաբանութեան հրատեղյա տալով կը մեկնի Պոլիս, աստուածաբանական առաջին կարգի վկայականով: Մինչև 1876 քսան և չորս տարի շարունակ Պոլսոյ հոովմէական Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան սակ զանուոյ բոլոր թեմերը առաջնորդական պաշտօն կը վարէ: այդ պաշտօնավարութեան վերջին տարիները կ'անցնէ Նիկոմիդիա և Պարտիզակ ուր կը մտերմանայ նոյն թեմին Լուսաւորչական Հայոց Առաջնորդ՝ Ներսէս վարդապետ վարժապետանի հետ: Ներսէս վարդապետ այդ միջոցին Եպիսկոպոս կը ձեռնադրուի և ապա կ'ընտրուի Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարք:

Հոովմէական Հայոց հասունեան և հակահասունեան կռիւներուն մէջ տեղ, որ երթալով այնկե՛ծեալ կերպարանք մը կ'անէին, Յովսէփ վարդապետ Այվազեան կը գիմէ իր վաղեմի մտերմին Ներսէս Պատրիարքի, և փափաք կը յայտնէ վերադառնալ ի գիրկէ Հայ Լուսաւորչական ուղղափառ Ս. Եկեղեցւոյ:

Յովսէփ վարդապետ անմիջապէս կարձանագրուի ի ծոց հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. սոյն թուականին իսկ Առաջնորդական պաշտօնով կը զրկուի Նիկոմիդիա. բայց ո՛չ Նիկոմիդիոյ ամբողջ թեմին այլ միայն Պրուսայի կուսակալութեան իրաւասութեան տակ զանուոյ մասին վրայ, որ է Բազարբէջոյ կայն. որոյ ժողովուրդը գտնուած էր՝ ընդհանուր վիճակին առաջնորդ՝ Ստեփան վարդապետ Յովակիմեանի հետ (այժմ կ'պիսկոպոս և գարձեալ սոյն թեմին առաջնորդ):

Յովսէփ վարդապետ այդ կէս վիճակին վրայ երկու տարուան բարւոք պաշտօնավարութեամբ՝ բուն առաջնորդին և ժողովրդեան այդ հասունածին միջև համաձայնութիւն գոյացնելէ վերջ, 1878 ին, կը վերադառնայ ի Պոլիս և նոյն թուականին կը կոչուի Չալաթիոյ Սրբոյն Լուսաւորչայ Հայոց Եկեղեցւոյն քարոզչութեան պաշտօնին, միանգամայն սոյն եկեղեց-



ԳԵՐԱՊՈՍԻՒ ՏԵՐ

ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՉԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ

սոյն յարակից Ազգային վարժարանին տեսչութեան զոր կատարեալ պարտաճանաչութեամբ կը վարէ մինչև 1889 թուականը:

Սոյն թուականին է որ զժրգրաբար կը ծագին Չմիւսիոյ մէջ հակա-Մէլիքսեղեկեանանուան խռովութիւնները որոնք ազգային շղանակներու մէջ այնքան մեծ ազմուկ հանցին: Վէճը օրբան զօր կը սասականայ, այնպէս որ եթէ ոչ ազգեցիկ, գէթ մեզմ' և հաշտարար եկեղեցակաւ մը դէպի խռովութիւններու վայրը զրկուիլը անհրաժեշտ կը դառնայ:

Յովսէփ վարդապետ՝ ծանօթ ըլլալով իր հաշտարար և մեղմ բնութեամբը՝ առաջնութիւն կը ստանայ, այն ասեւուան Հայոց Պատրիարք Աշքեան Սրբազանի կողմէն, հրաւիրուելու որ երթայ Չմիւսիս և վերջ մը տայ կուսակցական գայթակղալի պայքարին:

Յովսէփ վարդապետ սիրով կ'ընդունի իրեն առաջարկուած պաշտօնը և ընդհուպ կը մեկնի Չմիւսիս: Վարդապետը Չմիւսիս հասնելուն պէս, երկու կուսակցութիւններն ալ կը

չըջապատեն զինքը, սիրալիբ ընդունելութիւն կ'ընեն իրեն:

Իւրաքանչիւրը կը սպասէ իր պահանջման համապատասխան գոհացում, իսկ ժողովրդին չկողմ մասը կը դիտէ թէ տեսնե՞ր խնդիրը ինչ կերպով պիտի լուծուի, որու մէջ յայտնի պիտի ըլլայ անշուշտ վարդապետին գործունէութիւնը:

Յովսէփ վարդապետ երկու կուսակցութիւնները լաւ մը ունկրելէ վերջը, կը ձեռնարկէ մը պաշտօնին. վերջապէս կը յաջողի երկու հակառակ կուսակցութիւնները իրարու հետ հաշտեցնել, երկուստեք համերաշխութիւն կը գոյանայ և կամաց կամաց ժողովուրդը կը սկսի հանդարտիլ, տեղւոյն Ազգային վարչական խորհուրդները որ կուսակցական պայքարներու ստիճի կազմալուծեալ վիճակի մը մէջ մնացած էին, վերստին կը կազմակերպուին:

Չմիւսիս խաղաղեցնելէ վերջը Յովսէփ վարդապետ անհուն գոհունակութեամբ կը մեկնի գէպի Մանիս, հոն տեղի ժողովուրդն ալ հանգար-

տեցնելու համար. (Մանիս, Չմիւսիսի երկու ժամ հեռու քաղաք մ'է ուրտեղի թեմը Չմիւսիոյ Առաջնորդարանի իրաւասութեան տակ կը գրանուի):

Կ'արեւի թէ Մանիսայի Հայերը անհաշտ և Չմիւսիսցիներէն շատ աւելի կը բռնուած էին որ մինչև իսկ վարդապետին անձին վրայ յախուտն յորձակուէն: Կը յանդգնէին. բայց վարդապետը միշտ հաւատարի՛ր իր հաշտարար և մեղմ սովորութեան, առանց կրքի եղնելու և ոչ իսկ յուսահատելու, թէպէտ անձը վտանգի մէջ, հեռագրու Չմիւսիս կը տեղեկացնէ անցած դարձածը, և միանգամայն կը հրաւիրէ նոյն տեղոյ թեմը զական խորհուրդը որ զայ իրեն աշակցի: Չմիւսիսայէն թաղական խորհրդոյ կարեոր անդամներէն մի քանի հազի անմիջապէս կը հասնին Մանիսիս, մէկ կողմէն թաղական խորհրդոյ անդամները՝ միւս կողմէն վարդապետին յորդորէջ քարոզները վերջապէս Մանիսիսն ալ կը հանդարտեցնեն:

Ասոր վրայ ժողովուրդը և Ազգային վարչութիւն կը փութան շնորհաւորել վարդապետը, որ տիրապիթ պարագաներու մէջ ծագած կուսակցական անհեթեթ գժուարութիւնները հարթելու համար ամեն բացառիկ ջանք և գործունէութիւն ի գործ դրաւ:

Յովսէփ վարդապետ՝ ալ այնիսան ժողովրդեան համակրութիւնը կը շահի, որ 1891 ին սկիզբը միաձայն հաւանութեամբ Չմիւսիոյ վիճակին առաջնորդ կ'ընտրուի, սակայն ինչ ինչ պատճառներով չուզելով ընդունիլ, կը հրաժարի և իր տեղ Արսլանեան Գեր. Ներսէս վարդապետը առաջնորդ ընտրել տալէ վերջ, կը վերադառնայ ի Պոլիս:

Նոյն թուականին վանայ հաշակաւոր դաւանափոխութիւնները սկսած էին արձագանգ գտնել ի Կ. Պոլիս, Պատրիարքարանը շուտաւ էր և անմիջական դարման մը կը փնտռէր կանեցնելու այդ տիրապիթ հոսանքն դէպ ի Ռուսաղաւանութիւն և առձեռն պատրաստ վարդապետաց մէջ — զի եպիսկոպոսունք այդքան վաւտակ և յոգնութիւն յանձն չէին աւնուր, — և է ընտրութիւն մը ընելու վարա-

նեալ ընթացքին մէջ կը գտնուէր. և ահա նոյն ժամանակի արդարութեան և կրօնական գործոց նախարար Ռիզա փաշային առաջարկութեամբ, որ ծանօթացած էր Յովսէփ վարդապետին ի Չմիւռնիա իր պաշտօնավարութեան միջոցին, կորոչուի վան զրկել զՅովսէփ վարդապետ, իբր բանիբուն եկեղեցական որ քիչ օր վերջը իր պաշտօնին վերաբերեալ պաշտօնական թղթերն ստանալով կը մեկնի ի վան ուր կը յաջողի Ազգին ու Ազգային Պատրիարքարանին իր վրայ դրած յոյսերն փրականացնել Ռուսագաւառութեան հոտանքը մեղմելով և բոլոր ջանքովը ու եռանդեամբ աշխատելով որ բոլորովին մարի այդ ազգակործան եռանդը, յորդորելով ժողովուրդը որ իրեն դարաւոր կրօնքէն ու հարազատ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծոցէն չը հեռանայ, որով թէ նոյն ժամանակին վանայ կուսակալ խալիլ պէյի (այժմ կուսակալ Պրուսայի) համարմանց կարժանանայ որպէս նաև Պոլսոյ Պատրիարքարանի և բոլոր ազգին:

Մինչ այս, մինչ այն, երբ թաղային, կրօնական և քաղաքական ժողովներն կազմակերպելով վարչային և այլ կարևոր գործոց անօրինութեամբ զբաղել սկսած էր, կուսակալ խալիլ պէյ պաշտօնանկ ըլլալով կը յաջորդէ իրեն Պահրի փաշա որուն բարեկամութիւնն ալ կը շահի մասամբ, այլ ինչ ինչ պատճառներ վրայ կը հասնին և իրեն ի վան մնալն անյարմար նկատելով, իր հրաժարականը կը զրկէ ի Պատրիարքարան որ անյսելի կը մնայ, և երկրորդել ու երրորդել վերջ կը տեսնէ որ պատարիսան չկայ, կ'ստիպուի պատրուակ մը ստեղծել ժամ յառաջ հեռանալու, և ահա վանական ելեմիայ քննութիւն մը պատրուակելով հրաման կ'ատանայ կուսակալէն այցելել կուսակալութեան բոլոր վանորայքը, և այդպիսեալ մեկնելով վանէն 1893 ին, կայցելէ կարգ մը վանքեր մինչև ի Բաղէշ և ի Մուշ, և անտի այլ ևս առանց վերադառնալու ի վան, կը մեկնի ի Կ. Պոլիս, Գարբերդի և Արարիի ճանապարհաւ:

Պոլիս հասնելէ վերջ հազիւ ճանապարհի յոգնութիւններէն հանգըստացած կը զրկուի ի Պանտըրմա և ի Պալքէսէ, որ սոյն վիճակաց մէջ 1893—96 եռամեայ պաշտօնավարութենէ մը յետոյ կը վերադառնայ ի Պոլիս:

1897 ին Տրապիզոնի առաջնորդ արժանայիշատակ Տ. Եղիշէ Ծ. վարդապետի տխրաւիթ վախճանէն յետոյ, կը զրկուի ի Տրապիզոն իբր պատրիարքական փոխանորդ, և նոյն պաշտօնավարութեան միջոցին կը նստուի Առաջնորդ վիճակին Ռոտոսթոյի որ է 1898 ին, և 1899 ի մայիսին նոյն վիճակին վրայ եպիսկոպոս կը ձեռնադրուի էլ միաժամ վեհ Միկայիլ կաթողիկոս խորհմանէ, ի վարձ իր երկարամեայ բարւոք ու արդիւնաւոր պաշտօնավարութեան, Պոլսոյ վարչական ժողովներու որոշմամբ:

1898 ի Ապրիլ 4 ին Եզիպտոսի Գաւառական Երեւոյթանական ժողովոյ

միաձայն հաւանութեամբ կը նստուի Առաջնորդ Հայոց Եզիպտոսի, որ Ռոտոսթոյէն աւելի պէտքն զգալի է Սրբազանին նման բանիբուն և լեզուազէտ Առաջնորդի մը, որու կը սպասեն առկալ մնացած ազգային կենսական շատ մը խնդիրներ, և որոնց ժամ առաջ կարգադրութեանը կարողութիւն և յաջողութիւն կը մագլթեմք Սրբազանին:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Յ'ԱՂԵՔՍՏԵՆՈՒԹԻՒՆ

Տեղոյս Առաջնորդական Տեղապահը Արժ. Մամբրէ քահանայ Վարդանեան և Դիւանապետ Նազարէթ Էֆ. Աղազարմ, չարած օր Աղեքսանդրիա իջած էին, Եզիպտոսի նորընտիր առաջնորդ Այվազեան Եպիսկոպոսը գիմարեալու համար:

Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան Ռուսական շոգնաւով կերակի գիշեր ուշ ատեն Աղեքսանդրիա հասաւ: Ն. Գերապատուութիւնը պարտաւորեցաւ գիշերը շոգնաւին մէջ անցնել:

Հետեւեալ առաւօտուն ժամը 10 ին Նորին Գերապատուութեան ուղղակի շոգնաւ գիմարեալու գացին Աղեքսանդրիոյ կուսակալութեան կողմէն Պաշ Մուսայիքը, յանուն Ազգային Վարչութեան Առաջնորդական փոխանորդ Արժ. Տէր Մամբրէ քահանայ և դիւանապետ Տիար Նազարէթ Աղազարմ, Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ բոլոր անդամները, և հայ պատգամաւորութիւն մը: Ժողովրդեան խոսն բազմութիւն մը լիցուած էր բարսփին վրայ:

Գերապատու Սրբազանը իրեն մանաւոր լանտով մը ուղղակի առաջնորդեցաւ դէպի Առաջնորդարան. ուր ընդունց բոլոր ներկայները: Փոխադարձ ճոտախօսութիւններ կ'ընէր և Սրբազանին բարի գալտեսանը մագլթանքներ ուղղուեցան:

ԱՌԱՋՆՈՐԴԻ Ի ԳԱՀԻՐԷ

Թերթը մամուլի տակ զրուած պահուն Եզիպտոսի առաջնորդ Գեր. Յ. Այվազեան Եպիսկոպոս հասաւ Գահիրէ (ժամ 12, 45):

Սրբազանը կայարան հասնելուն պէս առաջնորդեցաւ հիւրանոց, ուր կ'սպասէին Ազգ. Գաւառ. Վարչութեան Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Վ. Տիգրան բաշա Ապրօ, Վ. Պօզոս բաշա Նուպար. Եռսուֆ պէյ Աղիզ. կարապետ պէյ Երեմիան և Ազգ. Վարչութեան բոլոր անդամները և մեր հոգևոր դասը:

Ընդունելութիւնը հինգ վայրեան տեղց գրեթէ Ապա' Նորին Գերապատուութիւնը հրաբերեցաւ Վ. Տիգրան բաշայի կողմէ մասնաւորապէս զրկուած շաւնօյի մը մէջ, որուն կը հետեւին 20 ի չափ կառքեր, որոնց մէջ տեղ առած էին Ազգ. Վարչութեան անդամները և տեղոյս բոլոր Բարեկարգման և կրթական ընկերութեանց ներկայացուցիչները:

Սրբազանին կառքին առջևն և ետևն կ'երթային հեծկազօր ոստիկաններ: Վսեմ. Նուպար բաշայի ապարանքին և Հօթել Երբուի և անկէ Հայոց Բարեկարգման սրբաբանին (որ ի պատիւ Նորին Սրբազանութեան Եզիպտական և Յունական զբօշակներով զարդարուած էր) առջևն անցնելով քնաց եկեղեցի ու ետը առաջնորդարան, ուր Ն. Գ. կ'ընդ ընդունելութեան մանրամասնութիւնները յաջորդ թուով:

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ԲԱՇԱ ԵՒ ՀԱՅՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տամատ Մահմուտ փաշայ' ասկից առաջ իրեն եղած դիմումներուն ի պատասխանի, Սուլթանին բացարձակապէս յայտարարած էր թէ չը պիտի կրնար Պոլիս վերադառնալ, որչափ ատեն որ իր Հայրենիքը վատնողի մէջ տեսնէր: Մահմուտ փաշայն ալ խնդրած էր Սուլթանէն որ զար տեղը չը յազնի իր ետևէն պատուիրակներ զրկել ասդին անդին, զինքն հաշտեցնելու պաշտօնով:

Երբ Տամատ Մահմուտ փաշայ Եւրոպայէն Եզիպտոս եկաւ, Սուլթանը առիթէն օգուտ քննելով, պաշտօն յանձնեց Մուլթար փաշայի խորհրդական քարտուզար Մահմուտ պէյի որպէսզի Մահմուտ փաշային հետ բանակցութիւն մտնէ և համոզէ զայն Պոլիս վերադառնալ:

Մահմուտ պէյ անդամ մը եկաւ Եզիպտոս ու պարտաւ վերադարձաւ, Սուլթանը դարձեալ զրկեց զայն Տամատի քով «քեզ նայիմ», նայէ որ այս անգամ փաշան միտին բերես», ըսաւ Մահմուտ պէյին:

Մահմուտ պէյ կրկին անյախճ ելաւ ու երբ այս անգամ ալ պարտաւ վերադարձաւ Պոլիս, խեղճը Սուլթանին երեսէն ինկաւ և թէ անճարակ տիտղոսով մկրտուեցաւ, փոխանակ շքանշան ստանալու ի վարձ իր այխասութեան, թէպէզ ապարդիւն:

Տամատ Մահմուտ փաշայի Պոլիս չը վերադառնալու որոշումը անգառնալի կը թուի: Փաշան հիմախուհիւն ձմեռը Գահիրէ պիտի անցնէ, և երկար պայմանաժամաւ Գար Տուպարայի կ'ընէ՝ կահաւորեալ պայտս մը վաճաճած է տարեկան 1200 եղիպտական ոսկի վարձքով, ուր կը բնակի երկու զաւակներով մեկտեղ:

Փաշան վերջերս շատ ցաւած է Տանը պէյի Պոլիս վերադառնալու համար, որ իր զաւակներուն ուսուցիչն էր, և մահուան դատապարտուած էր, որուն Սուլթանը ներում չնորհեց:

Տամատ Մահմուտ փաշայ վճռած է գործել և ահա այդ նպատակաւ երկու օրէ ի վեր բանակցութեան մը տած է տեղոյս Հայ դաշմակախութեան կարևոր մէկ անդամին հետ:

Բանակցութիւնը մեծ եռանդով կը կատարուին թուրք նախկին բարձրաստիճան պաշտօնատարի մը միջոցաւ որ նմանապէս մտտերս Գահիրէ հաւած է. սոյն անձը Տամատ Մահմուտ փաշայի վաղեմի մտերմներէն մին է:

Բանակցութիւնը կը կայանան Հայոց և թուրքերու միջև գործունէութեան համեմատութիւն մը գոյացնել:

Յիշեալ ազգայինը դիտել տուած է փաշային թէ՛ որչափ ատեն որ թուրքերու և հայերու պահանջները իրարու հետ հաշտեցնելու մասին համաձայնութիւն չը գոյանայ, միութիւն անկարելի է:

Ձօր օրինակ հայերը առանձնաշքնորհեալ Վարչութիւն մը կը բաղձան, բան մը որուն թուրքերը և ի մասնաւորի ժէժ-թուրքերը կը հակառակին: Սոյն վերջինները կառաջարկեն որ Հայաստանի գաւառներու մէջ լոկ լաւ բնորոգումներ մտցուին, և Հայ ժողովուրդը բաւականանայ այսպիսով:

Թէ՛ ինչո՞ւ հայը թուրքէն աւելի առանձնաշքնորհում վայելելու իրաւունք ունենայ միևնոյն երկրին մէջ ուր երկուքնալ խառնուած կապրին. թէ ինչո՞ւ թուրք և հայ հաւասարապէս կախում չունենան միևնոյն օրէնքէն, ահա՛ ժէժ-թուրքերու դաշմաբարը՝ որ բոլորովին սխալ է: Եթէ հայերը կը պնդեն առանձնաշքնորհեալ Վարչութեամբ մը օժտուիլ և կամ անկախ ինքնավարութիւն մը ունենալ, պատճառը այն է որ բարեկարգում մը ցուցելը այդ գաւառները, հին ատենէն հայերու սեպհակախութիւնը կը կազմէին, հետեւաբար երբ առիթը կը ներկայանայ բնական է որ այդ կորուսեալ սեպհակախութիւնը պէտք է վերապահուի իրենց նախնական տէրերուն չոր է հայերուն:

Եթէ վայրեան մը ժէժ-թուրքերու ըսածին պէս ընդունինք, պիտի տեսնենք որ գործնականին մէջ անիւրակախ պիտի դառնայ և որ մը չէ օր մը կրկին խափութիւններ պիտի ծագին. թէ ինչո՞ւ համար:

Դիցուք թէ բարեկարգումներ ներմուծուեցան Հայաստանի գաւառներուն մէջ, և որչափեցաւ որ Հայ և թուրք հաւատար իրաւունք ունենան՝ միևնոյն հողի վրայ:

Հայը՝ չնորհիւ մոռուած բարեկարգումներու, բնական է թէ հիմախուհի պէս կաշկանդուած չի պիտի մնայ զրեւու, չարժեքու և խօսելու մէջ, քիչ ժամանակամիջոցին պիտի բազմապատուէ իր ազգային և մտաւորական ոյժը, աւելի լըծրէն պիտի արձարծի իր մէջ նուաճեալ ուղղի մը անկախութեան բնական ուղի, և հիմախուհի շատ աւելի զօրաւոր կերպով ոյժը ամփոփած և հաւաքած՝ պիտի յեղափոխի ապագային իր անկախութիւնը վերստանալու, և իր կորսեցուցած սեպհակախութեանը վրայ օրինաւորապէս ձեռք դնելու համար:

Ատոր վրայ երկու ազգերը, թուրք և Հայ առեւտրութեամբ պիտի սկսին զինուիլ իրարու դէմ և ահա խոտուութեանց արինահեղ երկրորդ չըջան մը. առաջինէն աւելի գէշ:

Ո՞վ կրնայ ապահովցնել որ Սուլթանի Համիտը և կամ այն ատենուան իշխող իր յաջորդը յօժար կամօք պիտի տայ հայուն ուղած անկախութիւնը. և թէ թագաւորը տալ ուզէ, ժողովուրդը պիտի հակառակի, նամանաւանդ թուրք ժողովուրդն ալ օրքան զօր յառաջդիմութեան քայլեր առած ըլլալով՝ հայրենիքի նախանձախնդիրներ հիմախուհի աւելի շատ պիտի ըլլան իր մէջ այդ օր:

Ձէ՞ մի որ տգէտ դասակարգէն աւելի լուսավոր դասակարգի պատկանող ժէժ-թուրքերն են որ կը հակառակին հայկական ինքնավարութեան: Ձէ՞ մի որ ատենը կուզեն որ մի միայն բարեկարգումներ ի գործ գրուին փոխանակ առանձնաշքնորհումի: Ձէ՞ մի որ դեռ անկէ երեք ամիս առաջ Փարիզի խաղաղութեան Համաժողովին մէջ ժէժ-թուրքերու էն լուսավոր պարագլուխներէն մին զանուող Ռիզա պէյը (Մէշլէթի խմբագիրը) բացարձակապէս զէմ խօսեցաւ Հայ կական ինքնավարութեան և կամ՝ ա-

ուանձնաչնոր հումներու թուրքիոյ ուրիշ գաւառներու մէջ մտցուելիք բարենորոգումները նոյնութեամբ Հայկական գաւառներու մէջ ևս պիտի դործ դըրուին, առիկ աւելի ինչ կը պահանջեն ըսաւ Ռիզա պէյ, հոյերը:

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղբքսանդրիոյ մեր մասնաւոր թղթակցը հետեւեալը կը գրէ մեզ երէկի թուականով:

Ապահովապէս քաղաքիս վարժարանին շուրջը դարձած ազգի և տխուր խնդրոյն արձագանքը մինչև՝ ձեր ախանջը հասած ըլլալու է: Հայ Մարգարէի մը հնարամիտ ուղեղին ծնունդ կողմ այդ խնդրոյն վրայ ուրիշ առթիւ գրելու խնայումով, այս անգամ կողքով խնայում ուրախութիւն չուրքի տալ ձեզի մեր «Աղբքսանդրիոյ» վրայ:

Այս ճշմարտապէս բարենպաստի ընկերութիւնը որ երբեքն այս և կամ այն կուսակցութեան կիրքերը յագեցնելու կը ծառայէր մինակ, վերջերս բարոյութիւն վերակազմուելով, անոր ղեկը յանձնուեցաւ այնպիսի անձնատուութիւններու որոնք իրենց սրբուած պաշտօնը գիտակցութեամբ և ազնւորքն կատարել կը ջանան, վեր ըլլալով այն ամեն գնով որ պէտք է հաշիւները որոնցմով կը բազմին մինչև այսօր այդ ընկերութեան տիրացու վարիչները:

Շնորհիւ «Աղբքսանդրիոյ» նոր կազմակերպութեան, այսուհետև այդ ընկերութեան նպատակը պիտի ըլլաւ քաղաքիս հայ աղբքսանդրութեան վերակազմութեան և ոչ ուրիշ բան:

Տիար Զարեհ Սըվազլի «Աղբքսանդրի» նամակի Պոլսոյ Ատենայեան ընտրուելու երաշխաւորութիւն մընէ ինքնին ընկերութեան բարեւոյց գնացքին և վստահարար շատ մեծ օգուտներ կարելի է սպասել այդ ազնիւ հայուն անձնութեան:

Տիար Սըվազլի Հպատկանի պոստալիստ ատենակցիներու այն դասակարգին որ ժողովներու ճակատը ամենէն յայն ամբողջ վրայ բազմելով՝ գանգակ մը ի ձեռին և տափակ բանաձևերով նիստին կարգապահութեան կը հօսին երանելի ապշութեամբ մը:

Տիար Զարեհ Սըվազլի իբրև գործի, աշխարհի և նախաձեռնութեան initiative մարդ, միայն խօսքով չի բաւականանար, իրեն համար ատենակցութիւնը business մըն է որուն կը փարի հոգով:

Ասանց շողքորդել ուզելու զինքը, կըրնանք վստահարար ըսել թէ Աղբքսանդրիոյ մէջ և ոչ մէկ հայ կարող է անոր ըրած ընել երբ խնդրել «Աղբքսանդրի» հասցիները բազմապատկելու վրայ է:

Ըսածիս իբրև ապացոյց ուրախ եմ կարենալ ձեզ ծանուցանելու թէ Աղբքսանդրիոյ Թագապետութիւնը՝ Տիար Զարեհ Սըվազլիի ղեկավարութեան վրայ, 50 ուղիւյ բացառիկ նուեր մը գրկած է ընկերութեան անուկին և պաշտօնական նամակով մը յայտարարած է թէ յառաջիկայ տարին սկսեալ Թագապետութիւնը իր պիւտձեկին մէջ տարեկան 100 ուղիւյ նպաստ մը յատկացուցած է Աղբքսանդրիոյ Հայ «Աղբքսանդրի»:

Մեծ յաջողութիւն մըն է այս զոր Աղբքսանդրիոյ հայ գաղութը կը պարտի Տիար Զարեհ Սըվազլիի և որուն համար երաշխապարտ ըլլալու է այդ համակերպի երեսօտարդին:

Գիտ հազիւ ամէն մը ի վեր նա փոխատենակցի կարգուած է, բայց դրական այնպիսի ծառայութիւն մը մատուցած է ազգին:

որ շատ մը վստահապատիւներ մտքերուն անգամ չեն անցուցած մինչև այս օր:

Այս առթիւ զարմանալի չէ՞ զիտեղ թէ Եռուսեփեան Պօղոս պէյէ սկսեալ միշտ իր միջոցներ են եղած ազգին հասցիները աւելցնող:

Այս պարագային դատ, Տիար Զարեհ Սըվազլի ամառայ Գի գումարուած ընկերութեան մէկ ժողովին մէջ՝ Յուն վարկաժ փետրուար ամսոյ մէջ ի նպաստ ընկերութեան արուելիք մէկ թատերական ներկայացումին ծրագրեր ներկայացուցած է որ ասանց վերապահութեան վաւերացուած է ժողովին կողմէն:

Մօտէն ծանօթ ըլլալով Տիար Սըվազլիի կարողութեան, կամքի զօրութեան և գործելու եղանակին, և զիտեղով թէ նա որքան յարգուած է սիրուած է օտար գաղութներու մէջ, բնաւ տարակոյս չունիմ թէ անհայն յաջողութիւն մը պիտի ըլլայ այդ ներկայացումը մանաւանդ որ վստահ Պօղոս փաշա իր հովանաւորութիւնը պիտի տայ անոր և վստահ կարապետ Պէյ Ռիզա-եան իր աջակցութիւնը:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՎՍՈՒՄՆԵՐ

Գոհութեամբ կը տեղեկանանք թէ Աղբքսանդրիոյ Աղբքսանդրի Պօղոսեան երկուս վարժարանի Պատ. Հոգաբարձութիւնը պաշտօնապէս հրաժարած է Մեծ. Տիար Համբարձում Պէրպլեան, նոյն վարժարանի Տեսչութեան պաշտօնին, որ Տիար Պէրպլեանի հրաժարականին վրայ թափուր մնացած էր:

Անշուշտ մտնուած չէ թէ երբ ասիկ երեք ամիս անաջ Հայ Լսարան-Ընթերցատուն իր աշխտանքով մի՞նակին մէջ, պաշտօնի կը կուրծի Տ. Պէրպլեան, սա փութաց ժողովրդի կրթութեան իբր գասարան ծառայող այդ կրթասիրական հաստատութեան յօգուտ ծառայեցնել իր անձը:

Այսօր ալ ազգային մանկատանը դաստիարակութեան պէտքն է որ կը կուրծ Տեսչութեան պաշտօնին, ուրեքն կը յաւատարմ թէ Տ. Պէրպլեան այս հանգամանքն ունեցող պաշտօնը չը պիտի մերժէ:

— Խումբ մը Հայ երիտասարդներ Մոսկուայի մէջ առաջիկայ Նոր Տարին Հայերէն լեզուով «գրական ժողովուածու» մը պիտի հրատարակեն որուն նըպատակը պիտի ըլլայ բարոյապէս — հիւրինակել իր մէջ՝ գոյ ծելու ցանկացող գրողէս դասակարգի գրութիւնները. նիւթապէս — անկէ գոյացած շահուն մէկ մասը յատկացնել թրքահայ սրբերուն, իսկ միւսը՝ «ժողովածուին» աշխատակցող մեծ հեղինակներուն:

— Ռուսահայ Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ, «Հայկական Աշխարհ» և «Մանկավարժանոց» հանդէսներուն (առաջինը՝ շարունակեց 15 տարի, 1870 թուականէն սկսել, եկրորդը՝ 2 տարի, առաջինը գաղափարուն անմիջապէս վերջը) խմբագրելու, վերջերս Թիֆլիզի մէջ վախճանած է 60 տարեկան: Ստեփանէ սրբալուստը քաջ լեզուադէտ էր, Ռուսերէնը մանաւանդ, իր մայրնի լեզուն չափ լաւ գիտէր: Յիշեալ հանդէսները խմբագրելէն զատ, ըրած է նաև շատ մը թարգմանութիւններ: Սրբալուստը 25,000 ռուպլի կտակ մը

ըրբ է, որոնք բարեգործական նպատակներուն պիտի գործածուին ասիկէ 130 տարի վերջը, այսինքն կը 4 միլիոն ռուպլի կը բարձրանայ կատկած գումարը: Կոտակարանները պիտի ըլլան ներսէսեան վարժարանի հոգաբարձուները:

— Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը, ինչպէս ծանուցած էինք, Ռուս կառավարութիւնը վերջնականապէս փակեց նոյ. 14ին: Նոյն Ընկերութեան անդամները Ընդհանուր Ժողովի հրատարակած են գրքերուն ու գոյքերուն խնդիրը կարգադրելու համար:

— Երուսաղէմի Գերեզմանական որբանոցին մէջ պատասպարուած հայ որբերը ստակալի խեղճ վիճակ մ'ունին:

Որբանոցին տեսչութիւնը հայ որբիկներուն պէտք եղած անհունը չըտայէ և չարաչար կիրպով աշխատեցնելէ զատ, քրիստոնեայ արար տըղոց հետ կը պառակցեն զանոնք, որ այս վերջիններուն հիւանդութիւններէն (Գլխուտը հիւանդութիւնը ճաշատեղիներէն է) կը վիճակուին Շատերը եւ կուրծն առնել իրենց զաւակները, տեսչութիւնը չուրել եւ վերագործուանէ:

— Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի մէջ կզկակարութիւն սովոր սրբերը մեծ յատակ իմաստները ըրել են այդ արհեստին մէջ: Դեռ ատի կոչակարները ոչ միայն հիւանդանոցի 1000 որբերուն կոչիկները կը կարեն, այլ կը պատրաստեն նաև ծախու կոչիկներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրեալի կառավարիչ Եորկիոս իշխանին, Կրեալէն Յունաստանի միացնելու համար Եւրոպական Արքունեաց ըրած դիմումները ի գերեւ կըր են: Սուլթանը չ'է համաձայնած ատոր, և Տէրութեանց ըսած է որ՝ իշխանին 5 տարի ևս իր կառավարչութեան պաշտօնը վերանորոգելու չի ընդգիծանար:

— Սէն-Բեթրապուրկի Կայսերական Համարանի ուսանողները հետեւեալ հեռագիրը գրկած են թրանսպարի Նագահ՝ Պ. Բրուկերին:

«Առ Նորին վսեմութիւն Թրանսպարի Նախագահ Բրուկեր. Կը խեղդենք Ձերին վսեմութենէն Ռուսիա այցելել: Ռուս ազգը իր բոլոր հոգով ձեզի և ձեր սուրբ գաղտնի նուիրուած է»:

— «Տէյլ Մէյլ»-ին կը գրեն թէ Չարը ուզել է եղբ. քանի մը շարաթէն Սիկելիա երթալ, հոն ապաքինուելու համար: Իտալական Կառավարութիւնը Բալթիկ խարդախական Պուլտար պիտի տայ եղբ. անոր, բայց Չարը ուզել է մանաւոր վիղայի մը մէջ բնակել:

— Սուլթանը՝ Ռուսիոյ պահանջին վրայ՝ իրաւէ մը հաներ է որով արտօնութիւն կուտայ Կովկասիցի եօթն հազար մահմետական ընտանիքներու, երթալ թրքիոյ մէջ՝ հաստատուել:

ԳԱՅԹԱԿՂԱՆԻ ԴԵՊԷՄԸ

Մարդուանի շրջակայ վանքէն Տէր Ակիբոմոս՝ որուն կրտսեր որդին իր անբարոյականութեան համար այժմ Ամասիոյ բանտին մէջ կ'ապաշխարէ՝ տեղոյս հարուստներէն Ղազէր ազայի որդին է. անկարողութեան պատճառաւ (ոչ թէ նիւթական) վաճառակաւ նական ասպարէզին մէջ չ'յաջողելով և իբր Սուրբ Հոգիէն զրգուած սոյն վանքին քահանայ ձեռնադրուեցաւ և անտեղի առարկութեամբ քանի մը տարիներ քաղաքիս մէջ պաշտօն վարելէ ետքը՝ դարձեալ գնաց վանք և մէկ տարիէ ի վեր թէ որբերուն ընամակալի և թէ վանքին ընդհանուր կարուածոց տեսչի պաշտօնը կը վարէր:

Մնացեալ կիրակի Տէր Ակիբոմոս եկեղեցոյ մէջ պատարագի արարողութիւնը պիտի կատարէր: Ուրբաթ օր Տէր Հայրը ըստ սովորութեան պատարագի վերաբերեալ ամէն պատրաստութիւնները կը տեսնէ և իր հայրական գորովագութ ձեռքով չի գաղբի իրեն ընկերացող որբին քրնքուչիկ երեանքը փայտայելէ ալ՝ իրիկուան քանի մը հիւրերով սեղան կը նստին վարդապետն ու անբարը և երբոր տէր Հօր զինի կը հրամայենն, չի խմեր առարկելով թէ «Ես կարմիր գինի կը խմեմ» և քանի որ այս ժամանակ զեռ կարմիր գինի չի խմուիր, ուստի այսպէս խօսելով ըսել կուզէ թէ ևս գինի խմելու զէջ սովորութիւնը չունիմ, բայց բիշ մը վերջը կը խմէ:

Շարաթ օրն ալ կ'անցնի և իրիկուան դարձեալ սեղան կը նստին ութը ընկերներով. ժամը 4—5, նախ մէկ շիշ օղի կը խմեն, յետոյ չորս օխանոց փարչով գինին կը ճնկեն: Ժամը վեցը կերթայ և նոյն պահուն մեր տէրութեան միւս օրուան կատարելիք պաշտօնին համար պատրաստութիւններ տեսնելու պատրուակով կերուխումի սենեակէն դուրս կ'ելլէ և շտակ յարակից որբերուն ննջարանը կը մտնէ:

Որբերուն գիշերապահն ալ ազգական ուխտաւորին սենեակը դայած ըլլալուն հոն չի գտնուիր, և ահա Տէր Հօրը ննջարանը մտնելէն 10 րոպէ վերջը . . . վերոյշեալ որբը հազիւ բունէն արթնցած «Օգնութիւն, օգնութիւն» կ'աղագակէ և Հայրապետ անուն սպասաւորը ձայնը լսելով հոն կը փութայ, ինչ կ'ուզէր որ տեսնէ. «Գահանան» սատանայ եղած, և . . .

Ահա քահանայ մը՝ որ մեծ սատանայ մը ըլլալով հանգեթ՝ ցարդ խաբած է ամբողջ Մարդուանցին. քահանայ մը, որուն տրամադրութեան յանձնուած անմեղ հրեշտակներուն պատիւը բռնաբարել կը յանդգնի, ստակալի հրէշ մը՝ որ գառնուկի մորթով որբերու կարգը գասաւորուել կ'ուզէր, կարծեցեալ սուրբ մը՝ որուն բովէն կը հեռանայի եկեղեցոյ մէջ Պատուոյ ներկայութիւնը իր մօտը տեսնելով, ինքզինքս անարժան սեպելուս համար և վերջապէս Սաղայէլ մը՝ որուն «չարութեան ծակեցաւ» և իր ննջաւոր գիմակը վար առնուելով պժգալի իսկութիւնը երևան ելաւ:

Մարզումանցիքս դեռ շատ բաներ գիտենք մեր կղերներէն ոմանց վրայով որոնց մասին ցարդ լուծիւն պահած էինք. բայց ալ կը բաւէ: Ո՛չ, մեր քոյրերն ու մայրերը ջուր առնելու համար եկեղեցին չպիտի երթան, որովհետեւ տէրաէրները ըստ Սուրբ Գրոց համարով բարեկուրարի սովորութիւնը որդեգրած են: Թող ալ բուրվաւաններ չպատցեն մեր կեղեցիկ աղաքը եկեղեցւոյ մէջ, որովհետեւ « տէր որդիս » ի ժամանակ, խորանին առջև, վարագոյրին ետին պատարագիչ կղերին կողմէ անոնց ընթուշ այսերը փայտալուծու վրայ են. ո՛վ է այն անմիտը որ ասկէ ետքը պիտի թողու իր մայրը, բոյրը կամ կինը որ խոստովանքի համար անոնց առջև ծոնը դնելով պատմէ ընտանեկան նուրբ գաղտնիքները:

Եկեղեցին առանց բահանայի չի կրնար կանգուն մնալ, ուստի պէտք է որ բահանայ մը ունենայ, բայց ի՞նչ են այս բահանային պաշտօնն ու դերը: Բահանային նուիրական և սուրբ պաշտօնն է աղօթել, աղօթել և միշտ աղօթել. աշխարհի մէջ ճշմարիտ և վսեմ բահանայի մը պաշտելի պարտականութիւնն է նուիրական և սուրբ ճամբաներ հարթել յօգուտ մարդկութեան, պէտք է որ ան՝ վշտակրի մարդկութեան ցաւերուն, պէտք է որ ան՝ աշխուրջ հսկողութեամբ պահէ իր հօտը. մարդկութեան երջանկութիւնը ըլլալու է իր միակ բաղձանքը, և վերջապէս պէտք է խաղաղութիւն, ներողութիւն կ'սուրբ սէր տարածէ ամենուրեք: Բայց մեր բահանան իր սուրբ պաշտօնին անգիտակից՝ իրեն յանձնուած մատաղ և փափուկ հոգիներուն մէջ անբարոյականութեան մահաբեր թոյնը կը ներմուծէ, բահանան ծառին բուն արմատին վրայ կը յարձակի և այդ կերպով մատաղ մանուկներ փոխանակ բարի բաղաբացիներ ըլլալու, սինըլոր սրիկաներ կ'ըլլան. բայց յանցանքը որո՞նն է . . . Այս ծանրակշիւ պարագան Ս. Պատրիարքին նըկատողութեան թողլով, ընդհանուր բաղաբացիներս կը սպասենք Նորին Սրբազնութեան անմիջական և արժանավայել վճռոյն:

ՀԱՃԻ ԿԱՐԱԳԵՏ

Այս է «Արեւելքի» այն հատուածը զոր ծանուցիւք անցեալ անգամուան թիւով. Ընթելոցդները թող զայրանան որչափ որ կուզեն, բայց չզայթակղին ամբողջ եկեղեցական դասէն, որ ազգէ ալ ըլլայ: Բնական օրէնքն է որ, մարդկային ամէն դասակարգի մէջ բարիներ ու չարեր գտնուին: Մէկ կամ աւելի գարշելիներու անուան չը զոհենք ամբողջութիւնը, ու հետո ապրինք եկեղեցիէն:

Վերջի մը դարման պէտք է, այսինքն նորեր պատրաստել հիներուն անդ. թէպէտ նորերուն մէջ ալ միշտ գտնուին մեղաւորներ. լաւ է իմաստուն չարը քան տգէտ բարին:

Ս.

Ա Ձ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու դիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապու-էլ-Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլխ-Պէյ փողոցի ծայրը և թըրամվէյներու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով:

Ա Ձ Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խանութը ի Շարա Ապու-իլ-Ազիզ:

Օ Ր Ա Ց Ո Յ Ց
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1901 ՏԱՐԻՈՑ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ԱՁԳ. ՀԻՒԱՆԳԱՆՈՑԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ՃՈՂՈՎՈՐԿԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ
ԳԱՏԿԵՐԱԶԱՐԻ

Շրջակայ գիւղերէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին Դիմել վերայիշեալ հասցէին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաձայնօթ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. ՄԿՐՈՒՆՆ ՍՕՍՅԻԱՆ, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղաբացիութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆոնտի Ֆոնտիէի, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, գանձումներ, Սմաական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարողները հաճին դիմել Նիպաուի վրայ փաստաբան Ռարթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳՅՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԹ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏԱՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկանը:

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ

ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիճի մեծ պողոտայից վրայ Տալիւայի Սանիթիի դիմացը, Գախիկն ելեկտրակոն գործիներու վանառասուներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիտող Պատ. յաճախողները, գործի մարթութեան, գիներու չափաւորութեան և ճշտապահութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'ապրողներն նաև ձևագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ՃԱՅՄԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԼՁԱՆՃԵԱՆ


Շարա Ապու-Սպպահ

Նիսու-Տնիվեսի ղեղարանին դիմացը:

Օղատուն ու զուարճալի դիլք մարտի ու վայելելու սպաս համեղ աննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով: Եւ զանազան եղբարց ճաշարանը:

Ով՞ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԵՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տաքանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրատարակներ, կանոնագիրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Թանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամօք եւ ճաշկատոր սպազրութեամբ:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ